# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 52

«29» 06 2021թ. ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 40 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ստորաբաժանումների գործառույթները հստակեցնելու, ինչպես նաև դրանց արդյունավետ և համակարգված իրականացումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ ու 7-րդ կետերով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հրամայում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչություններին վերապահված գործառույթները հստակեցնելու մասին» N 40 հրամանի (այսուհետ՝ Հրաման) 7-րդ կետում կատարել հետևյալ լրացումը.

1) «իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունը» բառերից հետո լրացնել «ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 223.1.-223.4 հոդվածներով նախատեսված հանցագործությունների հետ համակցությամբ դեպքերի, որոնց նկատմամբ համապատասխան լիազորություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունը» բառերը:

2) Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններ.

«Եթե հանցագործությունների համակցությունը ներառում է կոռուպցիոն, ինչպես նաև

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 223.1.-223.4 հոդվածներով նախատեսված հանցագործությունների դեպքեր, ապա Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությամբ նախատեսված գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունը: Եթե հանցագործությունների համակցությունը ներառում է սպանության (բոլոր տեսակների), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 223.1.-223.4 հոդվածներով նախատեսված հանցագործությունների դեպքեր, ապա Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությամբ նախատեսված գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունը»:

2. Հրամանի 8-րդ կետում կատարել հետևյալ լրացումն ու փոփոխությունը.

1) «սպանության (բոլոր տեսակների)» բառերից հետո լրացնել «կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 223.1.-223.4 հոդվածներով նախատեսված հանցագործությունների» բառերը,

2) «1-ին կետի 1-ին կամ 2-րդ ենթակետերով» բառերը փոխարինել «1-ին կետի 1-ին, 2-րդ կամ 5-րդ ենթակետերով» բառերով:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

**Ա.ԴԱՎԹՅԱՆ**